



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ

(Գումարված ի ա. Էջմիածին, սեպտեմբեր 27-ից
մինչև հոկտեմբեր 2)

Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերին ընդառաջելով, եպիսկոպոսական ժողովին մասնակցելու փութացին Հայոց եկեղեցվո թարծրաստիճան եկեղեցականները, անմալընթաց թիվով:

Ներկաներն էին՝ ամեն. տ. Նդիշեն ա. արքեպիսկոպոս՝ պատրիարք Երուսաղեմի, ամեն. տ. Շնորհք արքեպիսկոպոս՝ պատրիարք Թուրքիո հայոց, գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոս՝ լուսարարապետ Մայր Աթոռո, տ. Սեյումբե արքեպիսկոպոս՝ հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ Ֆրանսայի, տ. Հայրիկ արքեպիսկոպոս՝ լուսարարապետ ա. Երուսաղեմի, տ. Պասկ արքեպիսկոպոս՝ հայրապետական պատվիրակ Անգլիո, ս. Բաբգեն արքեպիսկոպոս՝ հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի և առաջնորդ Արգենտինայի, տ. Թորգոմ արքեպիսկոպոս՝ առաջնորդ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմին, տ. Ասողիկ եպիսկոպոս՝ առաջնորդ Իրաքի հայոց, տ. Բաբգեն եպիսկոպոս՝ հոգևոր հովիվ Վաշինգտոնի, տ. Կոմիտաս եպիսկոպոս՝ առաջնորդ վրահայոց թեմին, տ. Զգոն եպիսկոպոս՝ հոգևոր հովիվ Միլանոյի, տ. Գնել եպիսկոպոս՝ քարոզիչ Բելյուսի Նոր Հանգի ա. Գեորգ եկեղեցվո, տ. Պարգև եպիսկոպոս՝ առաջնորդ Ռուսաստանի և Հյուսիսային Լովկասի, տ. Մաշտոց եպիսկոպոս՝ առաջնորդ Օիրակի թեմին, տ. Հուսիկ եպիսկոպոս՝ առաջնորդ Ադրբեջանի թեմին, տ. Վահան եպիսկոպոս՝ առաջնորդական փոխանորդ Այրարատյան թեմին, տ. Տիրայր եպիսկոպոս՝ առաջնորդ Ռումանիո և Բուլղարիո, տ. Նդիշեն եպիսկոպոս՝ առաջնորդ ԱՄՆ-ի արևմտյան թեմին, տ. Հակոբ եպիսկոպոս՝ հայրապետական պատվիրակի փոխանորդ Հարավային Ֆրանսայի, տ. Ծաֆե եպիսկոպոս՝ վերատեսուչ ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի և դիվանապետ ա. Երուսաղեմի պատրիարքության, տ. Զավեն եպիսկոպոս՝ առաջնորդական փոխանորդ

Աղեքսանդրիո, տ. Գարեգին եպիսկոպոս՝ առաջնորդ Ծայրագույն Արևելքի և Նոր Զելանդայի, տ. Վաչե եպիսկոպոս՝ առաջնորդական փոխանորդ Կա-
նադայի, տ. Վազգեն եպիսկոպոս՝ առաջնորդական փոխանորդ Նյու-Յորքի:

Սեպտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 10-ին, Ն. Ս. Օծությունը, շրջապատված երկու պատրիարքներով, եպիսկոպոսական դասը առաջնորդեց Վեհարանեն Մայր տաճար, ուր, Իջման ս. սեղանին դիմաց յուրաքանչյուրը ծունկի եկավ և կատարեց իր ուխտը: Աղոթքեն ետք, ժողովական հայրերը բարձրացան Վեհարանի մեծ դահլիճը, ուր գումարվեցավ ժողովը:

Վեհափառ Հայրապետը ժողովը բացավ գեղեցիկ ճառով մը, ուր հրավիրեց ժողովականները քննել առաջարկված հարցերը և որոշում տալ՝ նկատի ունենալով արդի աշխարհը հուզող մեծ խնդիրները:

Ժամը 11-ին, Գերագույն հոգևոր խորհուրդի ատենապետ գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հրավիրեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոսը, ստանձնելու նախագահության նախագահությունը, Իր կողքին ունենալով ամեն. տ. Նիկիշե և տ. Շնորհք ս. պատրիարքները, իբրև նախագահության անդամներ: Ժողովական հայրերը միաձայնությամբ երկրորդեցին հրավերը և ձեռնարկեցին դիվանի ընտրության: Քվեարկությամբ ընտրվեցավ հետևյալ դիվանը. գեր. տ. Սերովբե և տ. Բաբգեն արքեպիսկոպոսներ՝ ատենապետներ, և գեր. տ. Զավեն և Ծաֆե եպիսկոպոսներ՝ ատենադպիրներ:

Ժողովը գումարվեցավ նման վեց օրեր և ունեցավ ինը երկար նիստեր: Օրակարգի վրա նշանակված յուրաքանչյուր հարցի մասին կարդացվեցան հատկապես պատրաստված զեկույցներ և յուրաքանչյուր զեկույց քննարկվեցավ իր կարգին: Զեկույցներն էին.

1. Հայ եկեղեցվո բարեկարգության հարցեր—Ամեն. տ. Շնորհք պատրիարք.
2. Կուսակրոնության հարց—Գեր. տ. Զավեն եպս. Չինչինյան.
3. Ս. Զատիկը անշարժ և հաստատուն օր մը տոնելու առաջարկ—Գեր. տ. Զգոն եպիսկոպոս.
4. Աստվածաշունչի աշխարհաբար թարգմանության հարց—Գեր. տ. Ծաֆե եպիսկոպոս.
5. Հայց. եկեղեցին և Էկումենիզմը—Գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոս.
6. Հայց. եկեղեցին և աշխարհի խաղաղության ամրապնդում—Գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոս.
7. Հայ նահատակաց սրբացում—Գեր. տ. Բաբգեն արքեպիսկոպոս.
8. Բանադրանքի վերացում հայ բողոքականներուն դեմ և ձեռնադրության Մաշտոցի մեջ եղած նզովքներու վերացում—Գեր. տ. Պսակ արքեպիսկոպոս.
9. Հայց. եկեղեցվո ներքին ամրապնդում—Գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոս:

Նկատի ունենալով որ ժողովը չէր կրնար սպառել առաջարկված հարցերու մանրամասն քննությունը, ընտրվեցավ կեդրոնական հանձնախումբ մը, որ հանգամանորեն քննարկե բոլոր խնդիրները տարվան մը ընթացքին և առաջարկե զանոնք Վեհափառ Հայրապետին:

Հանձնախումբի անդամներն են. ամեն. տ. Նիկիշե պատրիարք, գեր. տ. Սերովբե, տ. Հայկազուն, տ. Բաբգեն և տ. Թորգոմ արքեպիսկոպոսներ և տ. Ծաֆե, տ. Տիրայր և տ. Գնել եպիսկոպոսներ:

Ժողովը երկարորեն քննեց ամեն. տ. Շնորհք պատրիարքի առաջարկները Մաշտոցի կրճատման մասին, հատկապես մկրտության, պսակի, և ձեռ-

ննդության խորհրդակատարություններու և կեդրոնական հանձնախումբին հանձնեց հիշյալ երեք խորհուրդներու պարզեցված ձևերը:

Վեհափառ Հայրապետը անձամբ ներկա գտնվեցավ և խոսք առավ երեք կարևոր հարցերու շուրջ:

Աստվածաշունչի աշխարհաբար թարգմանություն և Հայց. եկեղեցվո ներքին ամրապնդում: Առաջին հարցի մասին, տեսակետներու երկար փոխանակումն էտք, ժողովը որոշեց պահել ներկա դրությունը և կեդրոնական հանձնախումբին հանձնարարեց ուսումնասիրել և առաջարկներ բերել քահանայական դասի բարեկարգումի և կուսակրոն եկեղեցականության որակի զարգացման մասին, ի մտի ունենալով որ կուսակրոն եկեղեցականությունը պետք է հետզհետե հովվական պաշտոններեն հեռանա, հանձնե զանոնք ամուսնացյալ եկեղեցականներուն և զբաղի դաստիարակչական, գրական և վարչական աշխատանքներով:

Ընդառաջելով Վեհափառ Հայրապետի փափագին, ժողովը չզբաղեցավ Նյու-Ճրքիի մեջ կատարված ամուսնությանը վարդապետի մը:

Վեհափառ կաթողիկոսը խոսք առավ Աստվածաշունչի թարգմանության հարցի շուրջ, շեշտեց կարևորությունը գրաբար Աստվածաշունչի գիտական հրատարակության, որուն հետևողությամբ պետք է կատարվին արևելահայերեն և արևմտահայերեն թարգմանությունները:

Ժողովը անջատեց երկու հարցերը և քվեարկեց հետևյալ բանաձևը. «Հանձնարարել հայերեն գրաբար Աստվածաշունչի բնագրի գիտական հրատարակությունը և տպագրությունը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին կամ Մայր Աթոռի միջոցով՝ Հայաստանի գիտական հաստատության մը:

Հանձնարարել Աստվածաշունչի արևմտահայերեն թարգմանությունը և տպագրությունը Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Խնդրել Վեհափառ Հայրապետին և Երուսաղեմի պատրիարքին որ կազմեն թարգմանության հանձնախումբ:

Երկու վերոհիշյալ աշխատանքները տանել զուգընթացաբար»:

Ժողովական հայրերը մեծ գոհունակությամբ տեղեկացան Վեհափառ կաթողիկոսեն թե Նոր Կտակարանի չորս Ավետարաններու և Գործք Առաքելոցի արևելահայերեն թարգմանությունը տպագրության ընթացքի մեջ է և մոտ առնեն լույս պիտի տեսնե Էջմիածնի տպարանեն, տալը հազար տպաքանակով:

Ն. Ս. Օծությունը նախագահեց նաև Ը նիստին, որ քննարկեց եկեղեցվո ներքին միության ամրապնդման հարցը: Հայրապետը անդրադարձավ նախ Մայր Աթոռի և իր թեմերու հարաբերության և շեշտեց կարևորությունը «Մեկ մարմին ըլլալու զգացումին և գիտակցության՝ Մայր Աթոռի շուրջը»:

Ապա ընդօժեց Մայր Աթոռի և Տանն Կիլիկիո կաթողիկոսության միջև շարունակվող տարակարծություններու վերացման անհրաժեշտությունը հանձնելով զայն սրբազան հայրերու լուրջ նկատուման: Հետ խորհրդակցության, սրբագումար ժողովը միաձայնությամբ որդեգրեց հետևյալ բանաձևը. «Ժողովը ցավով կարճանագրե Տանն Կիլիկիո կաթողիկոսի և իր եպիսկոպոսներուն բացակայությունը եպիսկոպոսական ժողովեն, ուր եղբայրական սիրո ոգիով կրնային քննարկվիլ և լուծվիլ գրավված թեմերու հարցը և այն բոլոր հարցերը, որոնք արգելք կհանդիսանան Ամենայն Հայոց Հայրապետության և Կիլիկիո կաթողիկոսության համերաշխ և անկեղծ գործակցության, ի պայծառություն Հայց. եկեղեցվո և համրացումն անոր ներքին միության:

Ձեկուցված մյուս նյութերու առիթով, ժողովը առհասարակ առավ որոշումներ, որոնք կձգտին պահպանելու դարերով սրբազործված ավանդությունները, իրենց ոգիին մեջ, հարմարեցնելով ժամանակի պահանջներուն:

«Ս. Զատիկը անշարժ և հաստատուն օր մը տոնելու» հարցի մասին ժողովը ընդունեց հետևյալ որոշումը. երբ քրիստոնյա եկեղեցիները համաձայնին ու Հարության տոնը կատարելու անշարժ և հաստատուն օր մը, հայ եկեղեցին ևս միանա որոշումին և Զատիկը տոնե տարվան անշարժ և հաստատուն օր մը ապրիլի 2-րդ կամ 3-րդ կիրակին:

Ե. Հ. խորհուրդին նկատմամբ, ժողովը հայտնեց իր համակրությունը այն ճիգերուն որոնք կկատարվին ավելի ամրապնդելու եղբայրության ոգին և դրական գործակցությունը բոլոր եկեղեցիներու միջև:

Հայ ավետարանականներու նկատմամբ, սրբազան հայրեր, մեծամասնությամբ հայտարարեցին թե 1846-ին Կ. Պոլսո Մատթեոս պատրիարքի բանադրանքը պետք է «նկատել ժամանակի և տեղվույն հետ կապված հարց և այժմ քաջալերել դեպի սեր և միություն ամեն ձեռնարկ Հայց. եկեղեցվո և հայ ավետարանական համայնքներուն միջև»:

Ժողովը որոշեց ձեռնադրության Մաշտոցին մեջ պահել նգովքները իբրև մեր եկեղեցվո վարդապետության հիմնական արտահայտություն:

Նահատակներու սրբացման հարցը հանձնարարեց կեդրոնական հանձնախումբի հատուկ քննարկումին:

Ժողովը քննարկեց նաև գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսի զեկույցը խաղաղության ամրապնդման մասին, հայտնեց իր գնահատանքը Վեհափառ Հայրապետի գործունեության նկատմամբ, ի խնդիր աշխարհի խաղաղության պահպանման և իր հայտարարությունը փակեց հետևյալ բանաձևով.

«Մենք պատվեր կուտանք մեր եկեղեցվո սպասավորներուն և հավատացյալներուն արթուն և արտեռանդն կերպով պաշտպան կանգնիլ աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության և պետություններու համերաշխ գործակցության դատին, իրավունքի, արդարության և ազատության նվիրական սկզբունքներու լույսի ներքո»:

Ժողովը վերջ գտավ հոկտեմբերի 2-ի գիշերը, Վեհափառ կաթողիկոսի գոհունակության և օրհնության խոսքով կատարված աշխատանքի նկատմամբ:

ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐԻ ՍԵՐՈՎԱԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊ. ԱՊԱՏՅԱՆ

Յ հոկտեմբերի 1969 թ.,

Ս. Էջմիածին

ԴԻՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՈ

